Մրցույթ՝ Երևանի «Գևորգ Վարդանյանի անվան թիվ 192 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (1 մասնագետ հայերենով ուսուցմամբ դասարանի համար, 16 դասաժամ, 1 մասնագետ ռուսաց լեզվով ուսուցմամբ դասարանի համար 12 դասաժամ), պատմության (22,5 դասաժամ), կերպարվեստի (10 դասաժամ), անգլերենի (22 դասաժամ), գերմաներենի (14 դասաժամ), երաժշտության (ռուսաց լեզվով ուսուցմամբ դասարանների համար, 7 դասաժամ), ֆիզիկայի (ռուսաց լեզվով ուսուցմամբ դասարանների համար, 2 դասաժամ), քիմիայի (ռուսաց լեզվով ուսուցմամբ դասարանների համար, 1 դասաժամ), կենսաբանության (ռուսաց լեզվով ուսուցմամբ դասարանների համար, 2 դասաժամ), աշխարհագրության (ռուսաց լեզվով ուսուցմամբ դասարանների համար, 2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

1.Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափի
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
- անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
- ինքնակենսագրություն (Ձև 5)
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022թ. սեպտեմբերի 8-ին ժամը 14:30-ին**, Երևանի Գևորգ Վարդանյանի անվան թիվ 192 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Դավթաշեն, 2-րդ թաղամաս: Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 36-98-80 հեռախոսահամարով: